ԼԵՎՈՆ ՍՏԵՓԱՆԻ ԽԱՉԻԿՅԱՆ

Հայ ժողովուրդը, Սովետական Հայաստանի գիտությունը և մշակույթը մեծ կորուստ կրեցին։ 1982 թ. մարտի 12-ին վախճանվեց անվանի պատմաբան և բանասեր-աղբյուրագետ, Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Ստեփանի Խաչիկյանը։

Լ. Ս. Խաչիկյանը ծնվել է 1918 թ. մայիսի 1-ին, Երևանում, ծառայողի ընտանիքում։ 1935—1940 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանում։ Այն ավարտելուց հետո 1940 թ. անցնում է աշխատանքի Մատենադարանում և նվիրվում հայերեն ձեռագրերի ուսումնասիրման դժվարին ու շնորհակալ գործին։ Լինելով ակադ. Հ. Մանանդյանի աշակերտը, նա շարունակում է դասական հայագիտության լավագույն ավանդները, իր ուժերն ու տաղանդը նվիրում հայ ժողովրդի չուսումնասիրված էջերի լուսաբանմանը։ Արդեն երիտասարդ տարիքում նա դառնում է հայ միջնադարագիտության հեղինակավոր մշակներից մեկը։ 1954 թ. Լ. Ս. Խաչիկյանը նշանակվում է Մատենադարանի տնօրեն և 28 տարի անընդմեջ՝ մինչև իր կյանքի վերջը ղեկավարում այն, իր շուրջը համախմբելով միջնադարյան մատենագրությամբ և հոգևոր մշակույթի տարբեր բնագավառներով զբաղվող մասնագետներին, ծավալում եռանդուն աշխատանք՝ ձեռագիր մատյանների հավաքման, ուսումնասիրման և հրատարակման ասպարեզում։ Այդ տարիներին լրիվ բացվում է Լ. Ս. Խաչիկյանի, որպես գիտության կազմակերպչի, տաղանդը։ Անձնական օրինակով և նպատակասլաց ջանքերով Լ. Ս. Խաչիկյանն ըստ ամենայնի նպաստում է հայ ձեռագրական մշակույթի՝ գիտության ժամանակակից մակարդակին համապատասխան հետազոտությունների ծավալմանը, բնագրերի, մենագրությունների, մանրանկարչական ալբոմների հրապարակմանը, որը բերում է Մատենադարանին համամիութենական և համաշխարհային հռչակ ու հեղինակություն։

Իր բազմաթիվ հոդվածներով ու մենագրություններով, բնագրագիտական աշխատություններով Լ. Ս. Խաչիկյանն օրինակ և չափանիշ էր ձեռագրերի աշխարհը մտնող և միջնադարյան Հայաստանի պատմությամբ ու մշակույթով զբաղվող մասնագետների համար։ Նրա հրատարակած XIV—XV դդ. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններին» լրոս ստվարածավալ հատորները երևույթ էին սովետահայ պատմագիտության և աղբյուրագիտության մեջ։ Նրանք լրացրին այդ ժամանակաշրջանի հայ պատմագրության կարևոր բացը և մեծապես նպաստեցին միջնադարյան Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի լուսաբանմանը։ Մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Լ. Ս. Խաչիկյանը միջնադարի հասարակական շարժումների, քաղաքական կյանքի և գյուղական համայնքի պատմության հարցերի նկատմամբ («Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից», 1951, «Ազանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12—14-րդ դարերում», 1947, «14—15-րդ դարերի հայկական գյուղական համայնքի մասին», 1958, «Երզնկա քաղաքի «Ընդարց միությունն» կա-

նոնագրությունը», 1962)։ Նա լուսաբանել է Սյունիքի, Համշենի և Արտազի ավատական տների պատմությունը՝ շաղկապված մշակութային կյանքի հետ («Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը», 1969, «Էջեր Համշենահայ պատմությունից», 1969, «Արտազի հայկական իշխանությունը և Սորբորի դպրոցը», 1973)։ Լ. Ս. Խաչիկյանի մի շարք աշխատություններ նվիրված են հայ հնագույն դպրության հարցերին («Եղիշեի Արարածոց մեկնությունը», 1945, «Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը», 1963, «Գրիգոր Պարթևին վերագրված հարցումը», 1964), ինչպես նաև միջնադարյան հայ գաղթավայրերի և վաճառականության պատմության անհայտ էջերին («Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում 16—17-րդ դարերում», 1954, «Նոր նյութեր Կիևի հին հայկական գաղութի մասին», 1961, «Սարգիս աբեղայի Ուղեգրությունը», 1970 և այլն)։ Լ. Ս. Խաչիկյանի դիտական ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում միջնադարի հայ կրթական կենտրոնների և գիտական մտքի պատմության հարցերին նվիրված հետազոտությունները («Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», 1946, «Դիահերձումները հին Հայաստանում», 1947, «Մատթեոս Ջուղայեցու կյանքը և մատենագրությունը», 1956, «Հովհաննես Քոնեցու քերականությունը», 1977 և այլն)։

Լ. Ս. Խաչիկյանը որպես հեղինակ և խմբագիր գործուն մասնակցություն է ունեցել կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը. եղել է «Բանբեր Մատենադարանի» գլխավոր խմբագիրը, «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի և «Հայկական սովետական հանրագիտարանի» խմբագրական կոլեգիաների անդամ։ Նրա հմուտ խմբագրությամբ լույս են տեսել տասնյակ մենագրություններ և միջնադարյան բնագրերի քննական հրատարակություններ ու թարգմանություններ։

Մեծ է Լ. Ս. Խաչիկյանի ավանդը նաև գիտական կադրերի պատրաստման գործում։ Նրա ղեկավարությամբ դիսերտացիա պաշտպանած գիտությունների շատ դոկտորներ և թեկնածուներ այժմ աշխատում են հանրապետության տարբեր գիտական և ուսումնական հաստատություններում։ Նա մեծ շանքեր է գործադրել Մատենադարանը նոր երիտասարդ կադրերով ապահովելու, հայ ձեռագրագիտության և միջնադարագիտության վաղվա օրն ավելի արգասավոր տեսնելու մտահոգությամբ։

Իր բեղմնավոր գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը Լ. Ս. Խաչիկյանը զուգակցում էր հասարակական աշխատանքի հետ։ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվել է «ժողովուրդների բարեկամության» շքանշանով և մեդալներով։ Նա Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի առաջին դափնեկիրն էր։

Լ. Ս. Խաչիկյանը կյանքից հեռացավ ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում։ Մամուլի տակ է վերջերս ավարտված «Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվեմատյանը» ծավալուն ուսումնասիրությունը և բնագիրը, տպագրության է սպասում «Թովմա Մեծոփեցու մատենագրությունը» արժեքավոր հատորը, ուր ամփոփված են նրա տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքները։ Շատ մտահղացումներ, տասնյակ տարիների ընթացքում ամբարված ձեռագրական նյութեր, որ նա մտադիր էր մարմնավորել մի շարք նոր գրքերում և հրապարակումներում, ցավոք սրտի, մնացին անավարտ։

Ականավոր գիտնականի, հայագիտության անխոնջ մշակի և գիտության բազմահմուտ կազմակերպչի, բյուրեղյա ազնվության տեր մարդու, քաղաքացու և կոմունիստի պայծառ հիշատակն ընդմիշտ կմնա գիտության պատմության մեջ, նրա գործընկերների և բոլոր ճանաչողների սրտերում։

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի
թղթակից-անդամ